ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՀՐԱՄԱՆ

Կառավարիչ սենատին

—

Վերանորոգելով Մեր փոխարքայութիւնը Կովկասում, այս բարեբեր երկրում խանգարուած հասարակական կեանքի խաղաղ ընթացքը հաստատելու գործը Մենք յանձնեցինք Կովկասի Կառավարութեան համար Մեր վստահութեամբ ընտրած անձին։

Ներկայումս Փոխարքան, իրեն հաւատացած երկրի պայմաններին ծանօթանալուց յետոյ, ներկայացրել է Մեզ իւր ենթադատութիւնները ազգաբնակութեան հայկական մասին վերաբերեալ մի քանի կարգադրութիւններ փոխելու վերաբերմամբ, որոնք դժուարացնում են նորա կանոնաւոր և խաղաղ զարգացումը։

Մեր Փոխարքայի առաջարկութեան հաստատելը իբրև բարիք ճանաչելով, Մենք Հայ-լուսաւորչեան հոգևորականութեան շնորհում ենք ընդարձակ լուսաւորութեան միջոցներ յօգուտ հասարակական գործունէութեան։ Հրամայելով միևնոյն ժամանակ, ներքևը յիշած հիմունքներով, վերադարձնել եկեղեցական հաստատութիւններից խլուած կալուածները, Մենք թոյլատրում ենք Մեր Փոխարքային իրեն ենթադրուած երկրի սահմաններում այժմէն իսկ գործադրել ժամանակաւորապէս իւր կազմած կանոնները, մինչև նոքա օրէնսդրական կարգով կընդունուեն, որոնք պէտքէ ապահովեն ծխականների մասնակցութիւնը եկեղեցական կալուածների կառավարութեան վերաբերմամբ։ Իսկ որպէս զի առաջի-

կայում տեղի չունենան թիւրիմացութիւններ, որոնք կարող են ծագել գործադրուող օրինադրութեան թերի լինելու պատճառով, Փոխարքային է մնում քննութեան առնել այն խնդիրը, թէ ինչ յարաբերութիւն պէտք է ունենան կառավարական իշխանութիւնները հայ եկեղեցական հաստատութեանց հետ։

Ըստ այսմ հրամայում ենք.

I) Փոխելով 1903 թուի յունիսի 12-ի բարձրագոյն հրամանը յանձնել հայ լուսաւորչեան եկեղեցու պատշաճաւոր հաստատութեանց տիրապետութեան և կառավարութեան հայ-լուսաւորչեան եկեղեցիներին, վանքերին, հոգևոր հաստատութիւններին և հոգևոր-դպրոցական հիմնարկութիւններին պատկանեալ բոլոր անշարժ կալուածներն ու դրամագլուխները իրանց բոլոր եկամուտներով, որոնք ստացուել են արքունական կառավարութեան ժամանակ, բացի այդ գոյքերի պահպանութեան համար արած ծախքերից, ինչպէս նաև նոցա յարքունիս ընդունելու համար ծախսուած գումարներից։ Կալուածներն ու եկամուտները եկեղեցական հաստատութիւններին յանձնելը կատարել Մեր Կովկասեան Փոխարքայի համաձայնութեամբ ներքին գործոց նախարարի և հողաշինութեան և երկրագործութեան գլխաւոր կառավարչի հետ։

II) Հայ-լուսաւորչեան եկեղեցական կալուածներն ու նոցա եկամուտները յանձնելու ժամանակ այդ հոգևորականութեան արած յայտարարութիւնների ու միջնորդութիւնների վախճանական վճիռը Կովկասեան երկրում յանձնել Մեր Կովկասեան Փոխարքային։

III) Մինչև հայ եկեղեցական դպրոցների մասին նոր կանոններ մշակելը, Մեր Փոխարքային թոյլ տալ՝ Կովկասեան Փոխարքայութեան սահմաններում թոյլատրել եկեղեցիներին և վանքերին կից բանալ եկեղեցական-ծխական դպրոցներ, 1874 թուի յուլիսի 19-ի բարձրագոյնս հաստատուած կանոնների հիման վերայ։

IV) Ցանձնել Փոխարքային. ա) առանց յետաձգութեան դիմումն անել սահմանեալ կարգով առանց յարաբերութեան մտնելու պատշաճաւոր հաստատութիւնների հետ, նոր կարգադրութիւններ հրատարակելու հայ եկեղեցական ուսումնարանների համար, անշարժ կալուածներն ու դրամագլուխները Հայ-լուսաւորչեան եկեղեցու տիրապետութեան վերադարձնելու խնդրի հետ միասին, որոնք յանձնուած էին լուսաւորութեան նախարարութեան, 1898 թ. մարտ 26-ի և 1903 թ. յունիսի 12-ի նախարարական կոմիտեի բարձրագոյնս հաստատուած կարգադրութեամբ, և բ) ալքունի գանձարանի օգնութեամբ մշակել ծրագիր հայ-լուսաւորչեան եկեղեցուն պատկանեալ կալուածներում բնակուող գիւղացիների հողային կազմակերպութեան վերաբերեալ և այս ենթադատութիւնները սահմանեալ կարգով ներկայացնել Մեր հաստատութեան։

Սորա կատարման մասին կառավարիչ Սենատը թող անէ պատշաճաւոր կարգադրութիւն։

Իսկականի վերայ Նորին Կայսերական Մեծութեան իսկական ձեռքով ստորագրուած է ՆԻԿՈԼԱՅ

Պետերհոֆում 1 օգոստոս 1905 թ.